



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքեր»
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

սրառման և տուրանել կուրք ցույնեցած ձևադրին կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ կուրք ստեղծելու համար նոր

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5243

ԳՐԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆ Ն 17


ԼԱԶԱՐ

ՔՅՈՒՐԴ ԶԵՍՄԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ



ԹԻՎԻՆ - 1923.



5-243
677

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԲՈԼՍhevik ԵՐԿՐՈՎՈՒՄ ՄԱՍՆԵՐԸ

89.57

Հ-13

ՊՈՇՏԵՐՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՀ 14

Լ Ա Զ Ո

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ռ. Կ. Ե. ՄԻՋԱՅՅԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՅԱՏ
ՏԵՐԵՐԱՅԻՆ ԿՈՌԴՏԱՅԻ



Հ 307/9
III
1534

Ճ. Տ. Գ. Խ. Պոլիգր. Բաժ. 4 թղ տպարան, Պուշկինյան փ. № 3.



ՄԵՐ ԸՆՏԱՆԻ ՖԸ

Յես վեց տարեկան եյի:

Մենք ապրում եյինք Դյուլասորում. ունեյի հայր, մայր,
երկու յեղբայր և մի քույր; Հայրս Զիլանցի Հասան-Բեգի հո-
վիվն եր. հազիվ տարին մի-յերկու յերեք որ տուն եր գալիս,
մյուս ժամանակները լուր հոտի մոտ եր մնում; Հիշում եմ,
թե ինչպես շատ անգամ մայրս լաց եր լինում, աղաչում, պա-
դատում եր նրան, վոր գոնե շաբաթը մի անգամ տուն գա,
բայց նա միշտ նույնն եր կը ինում.

— Ա՛յ կնիկ, բա յես չեմ ուզում տուն գալ, իմ ոջա-
խում լինել, իմ ընտանիքին և երեխայցս մոտ գիշերել. բայց
դե աղան չի համաձայնվում... աղա ե, կարելի՞ ե նրա խոս-
քից դուրս գալ:

Ամբողջ տարին հայրս ստանում եր վարձ՝ երկու բեռ ցո-
րեն, մի տիկ լոռ, մի լիդր յուղ, մի ձեռք հազուստ, երկու
զույգ տրեխ: Դրանով պետք ե ապրեր մեր ամբողջ ընտանի-
քը: Մոռացա ասել, վոր տարեկան երկու զառ և մի ուլ ել
նա ստանում եր վորպես «փեշքեշ», եթե միայն տարին կան-
ցներ հաջողակ և վոչ մի հիվանդություն կամ վնաս չեր պա-
տահի հոտին:

Մայրս ել աշխատում եր. — հարեւանների համար չուր եր
բերում, խմոր հունցում, խնոցի հարում և մենք մի կերպ
ապրում եյինք: Ե՞ն, բնշ ապրել-կիսամերկ, վոտարոպիկ, զիմա-
քաց, որական մի կտոր գարի-հաց, մի աման թթու-թան կամ
մի կտոր շոռ: Բայց և այնպես մենք մեզ շատ ել գժրաղզ շե-

մինք զգում: Ճիշտ ե, տեսնում եյինք, զոր մեր հարևաններից շատերը լավ են ապրում, ավելի լավ՝ ուտում՝ խմում, հագնում, բայց այդ մեղ շատ ել տարօրինակ շեր թվում, չե՛ զոր մենք «Հվանի»—հովի ընտանիք եյինք, իսկ նրանք աղաներ, սեփական վոչխարի, տավարի, կայք ու կարողության տեր:

Երեկոյան, մուլին ընկնելուն պես, մայրս պատրաստում մեր անկողինը—ի՞նչ եր այդ անկողինը,—մի հին թաղիք փռած գետնին, վրան մեր միակ վերմակը—հազար ու մի կարկատաններով, բուրգը շատ տեղերից գուրս թափված: Բոլորս ել մորս աջ ու ձախ կողմերից մտնում եյինք այդ վերմակի տակ, փաթաթվում իրար ու քնում մինչև լուսարաց: Շատ անգամ մայրս մեղ հեքյաթներ եր պատմում և խրատներ ասում: Վճրքան քաղցր տպավորության տակ եյինք մենք ննջում, երբ նա պատմում եր «Միր-Չորանի» պատմությունը, թե ինչպես նա պարզ հովվությունից հասավ բեգության աստիճանի:

ՀԱԼԴՏՈՒՐԻԿ ՈՒԼԻԿԱ

Վճռ, այն ի՞նչ երջանկություն եր, երբ մի անգամ հայրս եկավ և յուր հետ բերեց երկու ուր Մեեկը սև եր, մյուսը սպիտակ, սև խալերով: Մենք քույր ու յեղբայրներ ուզում եյինք իրար ձեռքից խլել: Ես փաթաթվեցի շըլպատուրիկի վզով և վոչ մի կերպ չեյի կամ ենում նրանից բաժան-

կել:

Եղբայրս Տափուրը հասակով եր, տաս-տասներկու տարեկան, և այնքան ել չեր միջամտում: Զալիսն աղջիկ եր, հեռվից նայում եր և ուրախ-ուրախ ծափ տալիս: իսկ միջնակ եղբայրս Ալոն կամենում եր անպայման շըլպատուրիկին ինքը տիրանալ և սնն ինձ տալ: Քաշկոտուկ, նույնիսկ շանգուսուկ ու ծեծ մեջ տեղ եկան, բայց մորս միջամտությունը վերջ տվեց տարածայնության, և շըլպատուրիկ ուլիկը դարձավ իմ սեփականությունը:

Ամեն որ ես ինքս եյի տանում նրան արածացնելու, իսկ զիշերները զրկում եյի նրան և վերմակիս ծայրով ել ծածկում.

թեև այս բանը շատ ել եժան չը նստեց ինձ, վորովհետեւ մորս
զիրկը զիշեցի քրոջս, վոր ես Հրլպառութիկիս հետ վերմակի
ափին քննեմ:

Ամառը հայրս մեղ տարավ յայլաղ—«Ալա-Դաղը, Բեզը զի-
շել եր հորս թախանձանքներին, մի փոքրիկ վրան տվել, վոր
նա յուր ընտանիքն ել տանի «ղողան»:



Մենք ամենքս աշխատում երիք էրար Առաքից իւն չարտառութենին:

Ա՛, ինչ հրաշալի տեղ ե Ալա-Դաղը, Անթիվ, անհամար
սատնորակ աղբյուրներ, հագար ու մեկ տեսակ զունազեղ ծա-
ղիկներ, կախարդիչ դայլայլիկներով բյուրավոր թռչուն-
ներ, ծիածանի բոլոր գույներով փայլվլող թիթեռներ ու բգեղ-
ներ: Ամբողջ որն ես թռչկոտում եյի այդ կանաչների և ծա-
ղիկների մեջ, այդ աղբյուրների և առվակների շուրջը, քա-
ղում բանջարներ և արմատներ, շատ քիչ մտարերելով քաղ-
ցը, մինչև մայրս և քույրս չը ձայնեյին և չը հիշեցնեյին ինձ:

Չըլքտուրիկ ուլիկս ել այնպես սովորել եր ինձ, վոր այլին գիշեր ու ցերեկ չեր բաժանվում. ուր զնայի, վորտեղ նըստեյի, կանզնեյի, վագեյի՝ հետո եր, միշտ տրճինդ տարծվ, շատ անգամ ել նորաբույս պողերով սպառնալով. Յեվ վորքան սաղում եյին նրան այն մի գույզ գեղին զանգույակները, վոր քույրս կարմիր երիզով կապել եր նրա զգին. Ապա ականջների վերա յեղած երկու սպիտակ հավելամսերը. աշխույժով տրճինդ տալու ժամանակ, զանգույակների հետ միասին նրանք ել շարժվում եյին, կարծես աղջկա ականջի աղամանցյա ողեր լինեյին. Ի՞նչպես ուրախանում եյի, յերբ ես վազում եյի հեռուն, հետո ձայն տալիս, և նա տրճինդ տալով վազում դեպի ինձ,

Մ Ի Ր - Բ Ե Կ - Ա Ղ Ա Ն

Միք-Բեղ-Աղա, — լսել եյի, բայց չեյի տեսել. մեր զյուղումն ել աղաներ հարուստներ կային, բայց նրանց հարատությունը հիսուն վոչխարից, չորս կովից և երկու յեղնից շեր անցնում. նույն գետնափոր տները, ծիփց ու մըից սեացած դոնով ու առաստաղով, վորի կենտրոնում գտնված կոլորակ բացվածքը ծառայում եր թե իրրն լուսամուտ և թե իրրն ծխնելույզ. Դյուղում աղա թե շվան, հարուստ թե աղքատ, այնքան ել շատ չեյին տարրերվում միմիանցից, — համարյա նույն հասարակ հագուստն ու կապուստը, նույն կյանքն ու կենցաղավարությանը, նույն նիստն ու կացը, նույն շարքաշ աշխատանքն ու տանջանքը. դրա համար ել մեծ խարություն, չը կար, բոլորն ել իրար հետ վարդում եյին վորպես համահավասարներ, ե՛, զե բոլորն ել ուսյա եյին, յերկրագործ, աշխատափոր, կապած դառն աշխատանքի, հուր բրտինքի ու հալալ վաստակի հետո իսկ այստեղ, և, ուրիշ բան և վաշկատուն աշխրաթը, ուրիշ բան և բեզը. — Տասնյակ «սուրու» վոչխարներ հինգ-տաս հազարից ավելի, նախիրներով կովեր, երինջներ, արջառներ, ջոկերով ընտիր-ընտիր նժույզներ, տամայակ վրաններ, հատկացված զանազան պետքերի, հինգ-վեց կանայք, բոլորն ել նույն բեզի «խաթունե-ները, յու-

բարանչյուրն յուր առանձին դավակներով, բոլորն ել մետաքսի, արծաթի և վոսկու մեջ թաղված։ Վրաններից մեկը, վոր ամենից մեծն ե, 12 սյուների վերա կանգնած մի ընդհարձակ դահլիճ ներկայացնում ե իրենից մառանատունը, ուր կախված են 8—10 խողի։ առավոտից մինչև երեկո, 10—15 առույգ քրդուհիներ աշխույժով երգում են և խողիները շրխկ-շրխկացնում, մարդարատամանման կարաղը գունդ-դունդ դարսում մոտները դրած կարմիր հողե տաշտերի մեջ։ Նույն վրանի առաջ, չորս կանթանի հսկայական կաթսաները դրած, մի քանի միջահասակ կանայք պանիր են մակարդում և որական մի քանի տասնյակ տիկեր մոթալով լցնում։ Մյուս վրանում շարված են տասնյակ կաթսաներ և ամեն որ 4—5 վոչխարներից ու մի ջվալ բընձից համադամ կերակուրներ են պատրաստվում։ Իսկ վերի թմբի վրա գտնվում ե բեզի սպիտակ ընդարձակ վրանը, մետաքսյա վարագույրներով բաժանված մի քանի բաժանմունքների, մեկը նրա ննջարանն ե, մետաքս և դութնի անկողիններով, խալի ու խալիչաներով զարդարված, մյուսը զանձարանն ե, շատե-շատ ամուր մնդուկներով, վորոնց մեջ ով գիտե վհրքան վոսկի ու արծաթ կա պահված։ Մի ընդարձակ մասն ել նրա դիմանատունն ե, այստեղ ե նստում նա, շուրջը ունենալով աղաներին ու շեյխերին, բեզերին ու բեզդատաներին, այստեղ՝ ուտում, խմում, զվարճանում և իր ուզած եղանակով երկրի ու ժողովրդի բախար վճռում։

Ահա թե ի՞նչ ե նշանակում քյուրդ բեզ։

Վ Ե Տ Ի Ս Ո Ւ Զ Ի Ն Դ Ա Ր Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Վերբան լավ եր այդտեղ ապրել. — զեղեցիկ լեռներ, ծագկագարդ հովիտներ, զուլալ ու քչքչան աղբյուրներ և առվակներ, փոքրիկ վրան։ Հորս ամեն որ տեսնում եյինք։ Մայրս միշտ զնում եր բեզի խողին հարելու յես ել ուզածս ժամանակ զնում եյի նրա մոտ, իսկ Զալիսն զընում եր «փոքրիկ խաթունի» համար խալի-կարպետ գործելու։ Մեր տան վաչ հացն եր պակաս, վաշ ամենորյա թան-ապուրը։

Շատ անգամ ել, երեկոյան, մայրս յուր հետ բերում եր մի աման լիքը վլավ, բեզի սեղանի ավելցուկից Բընձի վլավ, յուղը վրան լճացած... Վորապիսի ախորժակով եյինք ուտում, հիշելով զյուդում քաշած մեր կիսաքաղց որերը, Յերանի միշտ այստեղ մնայինք և այսպես ապրեյինք, կրկնում եյինք բոլորս շատ անգամ։ Մայրս համոզեց նորս, նա ել դիմեց բեզին ու ստացավ նրա համաձայնություն՝ նույն «Ելի» մեջ բնակություն հաստատելու։

Բայց ավաղ, յերկար շրտեց իմ ուրախությունս. շուտով մանկական սիրաս զգաց վշտի առաջին դառնությունը։

Մի անգամ ուլիկիս հետ ժայռերի ու ձորերի մեջ թռչստալուց հետո, մի քանի փունջ լալա ու թեյրուն ծաղիկներ քյոլողիս շուրջը շարած՝ վերադարձա և մոտեցա բեզի վրանին, ուր մայրս խնոցի եր հարում. տեսա մյուս վրանից դուրս եկավ աղախինը, բանած բեզի իմ հասակակից աղայի, Թոսուն-Բեզի ձեռքից, Կամենալով իմ շալիկ ուլիկիս շնորհը նրան ցույց տալ, եռ վազեցի մի փոքր հեռու և այնտեղից ձայնեցի «զդը-զդը-զդը». ուլիկիս տրճինդ տալով, ցատկուտելով, վազեց գեղափի ինձ և խայտալոմ շուրջս պտույտներ գործեց, աջ ու ձախ թեքելով իր սիրուն զլուխը և զընդզընդանելով զեղին բոժօժները. Յես նայում եյի փոքրիկ-բեզին, թէ ինչ տպավորություն կը թողնի նրա վրա։ Հանկարծ նա ձայնեց։

— Զայնե, ուզում եմ, բեր, այն ուլիկը, շուտով բեր։

Աղախինը, Զայնեն պահանջեց, վոր ես բերեմ ուլիկը։

Փոքրիկ բեզը մոտեցավ շալիկիս, զրկեց նրա խարայաշ պարանոցը, և խրոխա կերպով դիմելով ինձ ասաց։

— Իսկ զո՞ւ զյագա, կարիք։

Յես մնացել եյի ապշած, — ինչու, ինչ եմ արել փոքրիկ բեզին։

— Քեզ առում եմ կորիր, շան լակատ, կորիր այստեղից,..

— Ուլիկը իմա ե... Վախճախելով արտասանեցի յես, կարծես հասկանալով, վոր նա մեծ մարդու վորդի ե, բեզ ե, նրա խոսքին հակառակիել չի կարելի։



Չայն Ե՛, ուզում եմ, շուշով ըե՛ր այն ու լիկը-կանչեց փոքը ըեղը:

Չալիկս լսեց ինձ ձայնս թե չե, ազատեց պարանոցը նրա ձեռքից և թռչկոտաց դեպի ինձ, կարծես պաշտպանություն դանելու, թագնվելով վոաքերիս ետնը:

Փոքրիկ բեգը կատաղեց, հարձակվեց վրաս և նրա բռունցքն իջավ զլիխոս: Թյոլոզը զլիխից ցած ընկավ, ապարոշը բացվեց և ծաղիկները շադ եկան դեռնին: Յերբ նա նորից հարձակվեց վրաս, յես ել վրդովեցի և չանցս ձգեցի նրա յերեսով: Նա ճշաց և գուաց,

— Բռնիր, Զայնն, բռնիր, ալետք և յես նրան սպանեմ...

Հաղիվ աչքովս ընկավ նրա փոքր ինչ չանցուոտած քիթը և ահա կատաղած Զայնն հարձակվեց վերաս, — մի քանի հարվածներ և յես ցած զլորվեցի: Փոքրիկ բեգը մի ահագին քար վերցրած, կամենում եր ջախջախել զլուխս, երբ աղախինը բռնեց նրա ձեռքից, մյուս ձեռքով ել ուլիկիս վզկապը:

Յես վոքրան ույժ ունեյի ճշում եյի և «զայեյիս» (մարս) ովնության կանչում: Վերջապես զայես դուրս թռավ վրանից և վաղեց ու զրկեց ինձ: Թիթս կպել եր քարին և աղրյուրի պես ծորալով արյուն եր հոսում:

— Տար, կորցրու այդ շան լակոտիդ թե չե մեծ ըեղը:

վոր իմանսա, ձեզ տուն ու տեղով կը ակին կը տա և փոշի կը-
դարձնի, -գոռաց Զայնեն:

— Ի՞նչ ե պատահել, ով այսպես արյունլիվիկ արեց ան-
մեղ մանկանո, — զոչեց մայրս արտասվթոր աշքերով:

— Ի՞նչ անմեղ մանուկ, կտտաղած շան քոթոթ ե, տես
ինչպես չանգուել ե փոքրիկ բեզի քիթը, արյունը մի յերկար
զիծ ե կազմել, հիմա Բնչ պատասխան պիտի տամ «խաթունիս»:

Մինչ մայրս աշխատում եր քթիս արյունը սրբել, ես
ճշում եյի և ուլիկս պահանջում: Բայց Զայնեն զնաց, յուր հետ
տանելով թե չարասիրտ բեզին, թե սիրունիկ ուլիկիս:

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԱՋԻՆ ՍԱՂՄԸ

Մեծ եր իմ վիշտը: Վորքան ուզում եյին ինձ հանգստա-
ցնել—չեր լինում, ամրող որը արտասուքը հեղեղի պես աշ-
քերից թափվում եր. մայրս շուտ—շուտ մի կտոր շոր թրջում
եր զնում քթիս վրա, իսկ ես վերցնում եյի ու զեն շաղը-
տում: Գիշերը շատ անհանդիստ անցկացրի. հենց վոր աշքերս
խփում եյի ինձ թվում եր, թե չալիկ ուլիկս կողքիս թռչկո-
տում ե, ուրախանում եյի, հանկարծ մյուս կողմից հայտնվում
եր փոքրիկ բեզը յուր աղախին Զայնեյի հետ և գոռում:
«Ռւլիկը բեր. իսկ դու շան լակուս, կորիրք»: Ճշալով վեր եյի
թռչում տեղիցս և տեսնում մայրս կողքիս շոյում ե զլուխս
և հանգստացնում ինձ:

Հիշում եմ վոր ես կատարյալ հիմանդ եյի, — զլուխս պայ-
թում եր, ջերմն այրում եր ինձ: Մայրս կողքիս նստած, շուտ-
շուտ ձեռքը զնում եր սառը ջրի մեջ և ասպա ճակատիս: Հան-
կարծ տեսնեմ թռչկոտալով սիրուն չալիկս ներս ընկավ և փա-
ղելով եկավ ու անկողնիս մոտ չոքեց: Վեր թռա տեղիցս,
փաթաթվեցի նրա վզով և ինչպես ջերմ համբուրում եյի նրա
զունչը, պիսակավոր ճակատը, աշքերը, պոզերը: Նա ել, կար-
ծես, փոխադարձարար համբուրում եր ինձ: Մոռացա և վիշտ
և ջերմ և զլիացավ: Այդ միջոցին ներս մոտավ նույն Զայնեն,
յուր հրեշային պահանջով.

— «Ուլիկը փախազ, փոքրիկ բեղը պահանջում է, ավելք»:
Յես փաթթաթեցի նրա զգով և չեյի կամենում երկրորդ
անգամ բաժանվել, բայց մայրս լռելլայն խեց նրան իմ ձեռ-
քից և հանձնեց Զայնեյին։ Նրանց զնալուց հետո մայրս խոր-
հրդափոր կերպով գարձավ ինձ։

— Ե՞ւ, զորդիս, զու զես փոքր ես, խելթդ չի համում,
ինչպես կարելի և բեզի խաթրը, կոտրել...

Նորոգվեց վիշտու խեղճ ուլիկս, նա ել թշվառ ստիպ-
ված եր մեալու իր չը սիրած բեղի լամուկի մոտ, վորը, ավ-
դիտե, երբեմն զուցե քմահաճորեն նույն իսկ թակում և նրան։

Ճիշտ ե, մի քանի որից հետո հայրս ինձ չալիկիս փոխա-
րեն մի ուրիշ ուլիկ բերեց, ազելի մեծը, ազելի չաղը, բայց
միթե նա կարող որ նմանվել իմ շալիկին։ Մի քանի անգամ
փորձեցի սիրել նրան, փայփայել, բայց նա այնպես վայրի
եր, հենց մոտենում եյի թե չե ինձանից տասը զադ հեռու
եր փախչում։ Յեզ ինչ տղեղ եր ոե, մազերը բիզ-զիզ, աչ-



Յեզ գամեաթեցե ու լիկիս զզով ու չեյի աւզում բաժանվել եղանից։

քերը շուած, նորարույս պողերը ծուռ ու մուռ. իսկի կարելի
եր համեմատել իմ չալիկի հետ:

Այդ որվանից իմ մեջ ձնվեց խորին ատելություն՝ թե գե-
պի բեզերը և թե նրանց բոլոր սպասավորները: Թիշ եր
մոռմ, տաելի հորս, վորը բեզի հովիվն եր դարձել, և մորս,
վոր բեզի խնոցին եր հարում, և քրոջս, վոր զնում՝ բեզի
ոլութունից համար կապերտ ու խալիչա գործելու: Ափսոս
շեր զյուղը — Գյուլթափան, երանի կրկին վերազանայինք այն-
տեղ, թաղ գարե հացով ու թթու-թանով ասզրեյինք, չե
վոր այնտեղ վոչ բեզ կար, վոչ ել բեզի յերես առած լակու-
ներ, վորոնք կարող են քմահաջորին խլել քեզանից այն, ինչ վոր
զեղեցիկ ու լավն ե:

ՖՈՒՅՐ ՈՒ ՅԵՂԲԱՅՐ ԴԱՐԱՎԱՆԴԸ

Անցել եր վեց յոթ տարի:

Ցես արգեն 13—14 տարեկան պատանի եյի: Մենք բա-
վականին լավ վիճակ ունեյինք: Յեղբայրս, Տափուրը մի առողջ
երիտասրդ եր, բեզի ասպախմբի մեջ աշխի ընկնող անդամը
դիշեր ցերեկ նրա մոտ, ուտում — խմում եր նրա սեղանից, իրը
թիկնապահ՝ հետեւում նրան, կատարում նրա հանձնարարու-
թյունները և շատ անգամ ել հատուկ իրեւ ասպախմբի ջարդ
— ավազակ, զնում կողոպտուի, կտրում կարավանների ճա-
նապարհը, կողոպտում տասնյակ բեռներով վաճառականների
տպրանիքը բերում — լեցնում բեզի պահեստները:

Բեզը շատ եր սիրում նրան, գեղեցիկ նժույգ ձիով, թան-
կազին գենքերով, փառավոր հագուստներով խրախուսում:

Հայրս շարունակում եր յուր հովվությունը և վորպես վոր-
ձած անասնաբույժ տարեկան 5-6 վոշխար եր ատանում վար-
ձատրություն, բացի յուր հագուստից, ապրուստից և տարեկան
երեք բեռ ցորենից:

Մայրս շարունակում եր բեզի խնոցին հարել, բայց Զալ-
խեյին այլևս չեր թողնում բեզի տունը զնալ, ասելով. հա-
սած աղջիկ ե, բեզի տունն ել ջանել — ջուհուներով լեցուն,
թող մնա մեր տանը, մնը անտեսական պետքերը հոդա:

Սլոն դարձել եր բնեղի «բարիսվանը» — գառնաբածը։ Ճիշտ է, թե հայրս և թե մայրս ուզում ելին, վոր ես գառնամ զառնաբած, իսկ Սլոն մնա առնը և մեր 20—25 վոշխարները արածեցնի բայց ես երբեք չը համաձայնվեցի։ Քանի քանի անգամներ այդ համառությանս պատճառով ծեծ կերա, բայց և այսպես պնդում եյի։

— Ի՞նչ ուզում եք — կանեմ առնը, միայն չեմ ուզում այն անամոթ թուրն-Բեղի ծառան լինել։ Նա վոր իմ չաղիկ ուզիկս խլեց, ես հավիայան չեմ մոռանար։

Ամեն որ լուսաբացին վերցնում եյի իմ փոքրիկ հոտս, բարձրանում սարի լանջը, հասնում մինչև «քոյր-եղբոր» ժայռը, նստում այնտեղ՝ Տափուրի ինձ համար ընծա բերած սրնղի վրա վարժություններ անում, իսկ հոտս խաղաղ արածում եր։ Յերեմին ել թաղփում եյի խոր մոտառանջությանց մեջ, երբ ուշաղիք նայում եյի այդ երկու հսկայական դադաղածն կարմիր բարերին, վորոնք կողք-կողքի ձգված եյին փոքրիկ դարավանդի վերա, շրջապատված կանաչով և գույնդույն ծաղիկներով։ Հիշում եյի դրանց մասին եղած նին ավանդու-



Ամեն առաջա վերցնում եյի հոտս գնում Քոյրը ու Նդրը գործվածքը, և Տուրքի նվերած ողնղի վրա վարժություններ անում

թյունը, թե՛ ինչպես այդտեղ մի բեզի տղա բանի կերպով կումնում և տիրանալ իրենց հովի գեղեցկուհի աղջկան, վորը սիրահարված և նշանված և լինում մի այլ շքավոր երիտասարդի հետ: Վրա և հասնում աղջկա յերիտասարդ եղբայրը, պատվազգացության բուռն դայրույթով սրախողիսող անում անզգամ բեղին: Այդ միջոցին քույր ու յեղբոր շրջապատում «լոլամները» և մեծ բեզի հրամանով նրանց կտոր-կտոր անում ու ձգում զիշակեր թռչունների և վայրի գաղաններին կերակուր: Անիրավության և անխողության ձայնը հասնում և յերկինք, սարը դողդողում և, ժայռերը ճարճատում, գետինը պատվում և կրակի բոցեր դուրս ժայթքում ու քարե կարկուտ թափում... Անա այդ երկու դագաղածների ժարմիր ժայռեն ել զայխ և ընկնում են նահատակ քույր ու յեղբոր մարմնի մասունքների վերա և ազատում նրանց գաղանների կերակուր լինելուց:

Մինչեւ այսոր ել, շատ շատերը տեսնողներ են եղել, վոր յերեմն, յերկու գերեզմանների մեջտեղից ծխի խիտ քուրաներ են բարձրանում և երեմն ել լուսեցեն ճարպներ²⁾...

Մանր խոներ եր առաջացնում իմ մեջ այդ ավանդությունը: Միթե ամենը, ինչ վօր լավ և գեղեցիկ՝ պետք և ոլոտեկանի բեզերին: և լավ տուն, և լավ ձի, և լավ զենք ու զրան, և գեղեցիկ աղջիկ, նույն խոկ չալիկիս նման սիրունիկ ուլիկր:

ԱՐՈՒ ԳԱՐԵ ԴԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ Ե

Խաղաղ եյին անցնում ենք որերը: Ամենքն իր դորձն ուներ: Տուններս լիքն եր, վոշ մի բանի պակասություն չեցինք զգում: Յերեկոյան վերադառնում եյինք տուն, հավաքվում ընդհանուր սեղանի շուրջը, ուտում մեր աշխատանքի քաղցր արդյունքը, ասում, խոսում, ծիծաղում և վեր կենում հանգիստ բնում: Առավայան ել՝ բոլորս զնում եյինք մեր գործին: Այս պես կանոնագոր շարունակվում եր մեր կենցաղը: Բայց խեղճ

²⁾ Քանզուշակ առը հրաբխային և, կիսմբորբռքված զբության մեջ՝ յերբեմնակի գործըներ և կրակի բոցեր և արձակում, զօրք այսոր ել առիթ և տալիս քրահը ինչ հազար ու մեկ առասպելներ հորինելու:

մարդկանց երջանկությունը հարատև չի լինում: Մի նոր թշվառություն եկամ տակն ու վրա անելու մեր խաղաղ կենցաղը:

Մի որ, սովորականի պես, կեսորին, սրինգս նվազելով վոշխարս բերում եյի «բերք-վոր Զալիսեն գար կթեր, հանկարծ դոգանատեղից մի աղմուկ հասավ ականջիս: Տեսա՝ մեծ, փոքր, կին, մարդ, տղա, աղջիկ, խուռն կերպով, զուտմ-զուչումով վազում են գեղի «Ըսայի» քարքարուտները: Տեսա հեռավից մի խումբ ձիավորներ են գալիս: Ժողովուրդը աղմուկով և ժխորով զնում ե գեղի նրանց:

Շտապեցի:

Եեկա ձորակը, թերա տեղ, Զալիսեն այնտեղ չեր և վոչ վոր ել չկար: «Արտաքս կարգի մի բան և պատահել», մտածեցի և վոշխարներս թողնելով գամմիոխ պաշտպանության, ես ժայռերը մացցելով, կտրուկ ճանապարհով ձորակից դուրս եկա գեղի դոգանատեղին: Վրանները բոլորն ել զատարկ եյին: ամենքն ել շտապել եյին գեղի այն կողմը: Ի՞նչ տեսասարան բացվեց աշբիս առաջ ժողովուրդը շրջապատել եր ձիավորներին և կազմել մի ընդհանուր սպահանդես: վողրի ու ձիշերի ձայնը յերկինք եր հասնում: Ամենքն ել լալիս եյին, վոչ վոր չեր պատասխանում իմ հարցին: Միրու մի նախազգացումով ալեկոծվում եր:

Ճեղեքելով ամբողջ ներս սողոսկացի:

Եեկ ել՝ մի ծանոթ ձայն, մի աղիողորմ կական հասավ ականջիս: Մի հզոր ճիգ դործադրելով ճեղեցի խիտ ամբոխը, դուրս եկա կենզրոնի հրապարակը և մնացի քարացած: Միքելի դայնս զիսարաց, մազերը գգգած, երեսը շանգոստած-արյուն-լվիկ, մաներգով սղում եր բացրաձայն:

— Վայ լո, վայ լո, վայ լո, վայ լո...

Մի աշիբներ, հեռու կացեք,

Տեսէք քաջաց քաջն և գալիս,

Մեծ ու փոքր ճամփա քացէք

Հաղթանակող քաջն և գալիս...

Վայ լո, վայ լո, վայ լո, վայ լո...

Ալ նժույզը տակին խայտում,
Պայտերից կայծ, հուր և ցայտում,
Վճռ բնչ հայացք, ինչ թե — թիկունք,
Մե—սե աշերն հուր — հրատում:

Վայ լո՛, վայ լո՛, վայ լո՛, վայ լո՛...
Ով աշիրներ, հեռու կացեր,
Տեսեք քաջաց քաջն և զալիս,
Մեծ ու փոքր ճամփա բացեր.
Տեսեք քաջ Տափուրն և զալիս:

Իսկ Զալիսն, իմ համեստ քույրիկս, մի կողմ դրած ամոթ
ու պատկառանք, երեսն ի վեր թափփած երկայն մազերը,
յուր հերթին ձայնակցում եր մորս և յերեմն ել յուր մազերն
եր պոկոտում.

Թուանա Զալիսեյի աշերն,
Կուրացել ես թշվառ մայրիկ,
Ալ նժույզը ել չի խայտում,
Դու չես տեսնում անբախտ մայրիկ.
Ամպերի հետ ել չի խաղում,
Նա դարձել է մի պարզ ոյաբուզ,
Բեռ և տանում, բեռն և դիակ,
Յուր տիրոջը խղճուկ մայրիկ:
Վայ լի զլժ, վայ, յի զլժ...

Սար ու ձոր, քար ու քռա, կարծես վողբում, ձայնակցում
եյին ծանր վշտից աշուղ դարձած մոր ու քրոջ վողբասա-
ցության: Ցուրաքանչյուր տուն վողբից հետո, ահազին ամ-
րոխը «վախ — վախ — վախ» բացականչություններով — բար-
ձրը ձայնով հեկեկում եր, վորը միախառնվելով՝ դժոխային
ցասման մի հզոր վայնասուն եր դառնում:

Ամենքն ել վշտակցում եյին անխափիք:

Նույն իսկ մեծ բեզը, Հասան-Աղան, անձամբ եկել եր
ընդառաջ երբեմն ել թաշկինակը տանում եր աշքերին, չըկա-
մենալով բացառություն կազմել: Վերջապես նա մոտեցավ զիա-
կին և դարձավ մորս —



— 30 —

A 111
1534

A circular blue ink stamp with Armenian text. The outer ring contains "ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԴՎԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԺԱՎՈՐՈՒՄ". The center contains "1970 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ".

— «լուրջին» —քուլրիկ, այդպես և աշխարհիս որևնքը, ի՞նչ կարող ենք անել.

Բարխեն ներ՝ սաբա թեր (արու գառը՝ դանակի համար ե), մխիթարվիր նրանով, վոր քո տղան ընկել և քաջարար, մեռել և հերոսին վայել մահով, —նա յուր խմբով կողոպտել և թեհրան գնացող կարավանը, պահապան Զօւնընկցի քյուրզերից չորսին սպանել և կողոպուտը ապահով հասցրել մեր սահմանները։ Դժբախտաբար յետից հասել և ժանդրամաների մի խումբ և նորից կռվի յեն բռնվելու Ամենքն ել վկայում են, վոր Տաֆուրը կռվել և այյուծի պես, երեք—չորս ժանդրմաների զետին և զլորել և պահանջել և յուր ասպախմբից կողոպուտը փախցնել, և ինքը յերկու ընկերներով թշնամիների առաջն և պահել, կողոպուտը զալիս ազատվում ե, իսկ Տաֆուրը յուր երկու ընկերներով գո՞ն են զառնում, Մխիթարվիր, քյուրիկ, քո տղան ընկել և հերոսի մահով։ Յերանի քյուրդ մայրերը բոլորն ել քո տղայի պես վորդիք ունենան»...

Տանյակ հակերով մահուղն ու ատրասը գնացին բեգի պահստները, իսկ առուրդ, աշխույժ և նորաբողբոջ երիտասարդ Տաֆուրի փոխարեն մի արյունաշաղաղ անշունչ զիակ եկալ մեր տունը...

Ուրիշները, ճիշտ և ցավեցին, վողբացին և նույն իսկ լացին, բայց և այնպես շուտով ել մոռացան. իսկ մեր տունը, մեր ոջախը նրա յետելից քայրայվեց, խորտակվեց և վոչնչացագ։ Մերունի հայրս անկարող լինելով տանել այդ ծանր վիշտը, հենց մյուս որը ընկալ անկողին և այլևս վեր չը կացավ։ Յերկու շարաթից հետո նրան ել թաղեցինք Տաֆուրի թարմ գերեզմանի կողքին։

Մայրս, սիրելի դայես, վոր այնպես առույգ ու աշխույժ եր, որական տասն խնոցի եր հարում ու դատարկում, մի անգամից կուշ եկավ, ծերացավ, դարձավ մի գողդոջուն պառագ։ Ես տեսնում եյի, թե ինչպես որ-որի վրա նա հարվում եր ու մաշվում։

Բարխեն ներ՝ սաբա թեր-գեռ այսոր ել ականջիս հնչում և Տաֆուրի զիակի վերա մեծ թեղի ասած առածը. բայց ինչու

հասարակ մահկանացուների զավակների մասին են դորձածում այդ տռածը, ինչու իրենց զավակների կյանքն ու բաղդավագությունը այնքան թանգ են գնահատում: Ե՛, նրանք թեզնը են, ընտրյալներ, միթե նրանց ու հասարակ «ըստյաշ»-ի զավակների կյանքը մի արժեք ունին...

ՉԱՐ ՆԱԽԱԶԳԱՑՈՒՄ

Մեր անտեսական գրությունը այնքան ել վատ չեր: Տափուրի ու հորս մահից հետո, յերբ մայրս ել ուժասպառ երեղել և այլես գաղարել եր խնոցի հարելուց, բեկը «բարեհաճել» եր եղբորս—Սլոյի պաշտօնը բարձրացնել զառնարածությունից հովվության, հորս ոռնիկն ամբողջովին հատկացնելով նրան: Մի քանի տարուց հետո, մենք արդեն 25 հատ կթի վոշխար ու այծ ունեցինք, մի այզքան ել զառ և ուլ: Ես շարունակում եյի մեր սեփական մոշխարի հովվությունը: Իմ սիրած վայրն եր «բույր-եղբոր»դարավանդը. վոշխարներս ել սովորել եյին նույն վայրին: Հենց վօր լուսարացնն ես նվազում եյի սրինգո, սովիտակ ներիմ-արու այծս վեր եր կենում և քայլերը ուղղում դեպի այն կողմը, վորին հետեւում եր ամբողջ հոտը: Ժամերով նստում եյի այդ հսկայական տապանաքարերի մոտ և շարունակ խորասուգվում միենուոյն մտածումների մեջ: կարծես իմ ամենորյա դասը լիներ այդ Քույր ու Յեղբոր պատմությունը, իր բոլոր վարիանաներով, զանազան մտապատճերներով, վորոնք ինքնարերաբար ներկայանում եյին ուղեղիս և զրադեցնում նրան: Իմ աշքին պատկերանում եր երբեմն այդ քույրը, 15-16 տարեկան մի զեղեցկունի, երկար վսակեգույն մազերը մանր նյուուերով ծածկած ամբողջ թիկունքը, կարճ գանգուր «գուլան-ջըկները» քունքերի վրայից յետ գնացած, վաթաթված ականջներին, կոլորակ դեմքը ասես բոլորած լուսին լինի, մեծմեծ սև աշքերը կարծես կրակներ են ցայտում, քթի խզեմը՝ լուսասաղի վայըն և փոխ առել մարմար բազուկները, մեղրամոմ մատները, շինարի բոյն ու բուսաթը՝ նրան մի

յերեկնային հուրի-զեղեցկունու կերպարանք եյին տալիս:
Մի անգամ ինձ թվում ե, թե նա նստած ոկաթն-ազդյուրի
մոտ, սպասում ե անհամբեր մեկին: Յեվ անա այն կողմից
եկավ մի ջանել-ջիվան խորթ յերիտասարդ, նույնքան գեղեցիկ,
նույնպես զբավիչ: Հուրին վեր թռագ տեղից, նրանք ու-
րախ-ուրախ մոտեցան միմիյանց: Հակառակի պես այդ բոպե-
ին հաջեց իմ գամփոր և մտապատկերս ցնդվեց, տեղիցս վեր
թռա՞ վախենալով մի զուցե զայլ մոտեցած լինի հոտիս:

Յերեմի մի այլ տեսարան եր երեսում աշքիս: Յես տեսնում
եյի նույն հուրին զլխի քոփին թեք զրած, աշխառյժով բար-
ձրանում ե դեպի այդ զարավանդը, քաղցրաձայն զլով
յերդելով: Հանկարծ մի քարածայոի տակից դուրս և թռչում
բեղական զարդարուն հազուսառով մի յերիտասարդ և նրա
ձեռքից բռնում: Աղջիկը սարսափահանար մի ճիշ և արձակում և
աշխատում ազատվել նրա ձեռքից: Սկսում ե մի զորեղ կը-
ռիվ: Բեզն + աշխատում և ձեռքով նրա բերանը բըռնել,
բայց նա մի կերպ զլուխը թեքում ե, ազատում և զիլ
ձայնով եղրորն ոգնության կանչում... Հանկարծ հայտնվում ե
նրա յեղբայրը, կայծակի արագությամբ ժայռե,-ժայռ թռչելով
հասնում ե և զաշույնի մի քանի հարվածներով չարագործ բե-
զին արյունշաղաղ գետին զլորում: Մի վայրկյան ես, և առա
քույր ու եղրոր շրջապատում են մի խումբ բեկի խոլանմանը և
նրանց ձգում սրերի ու զաշույների առաջ, եղրորն ու քրոջն
ել կտոր-կտոր անում:

Յեվ վոր ամենից սոսկալին ե, յերեմի այգ երեակայու-
թյուններս կերպարանավորվում եյին ձանոթ զեմքերով... Մի
անգամ ել ինձ թվաց այդ հուրին իմ քույրս և — Զալիսն,
բեզի տղան՝ թռուռն-բեղը, այն լակոտը, վոր դեռ ման-
կության ժամանակ այնքան մեծ վիշտ եր պատճառել ինձ
հափշտակելով շալիկ ուղիկս, իսկ աղջկա յեղբայրը՝ պատկերա-
նում եր ինձ յերեմի Տափուրը, երբեմն Սլոն, երբեմն ել յեռ
ինքս:

Այդ տեսիներից հետո, ես աշխատում եյի խուսափել

Քույր ու Յեղբոր դարավանդից, հոտս տանում եմ ալբումի ոի այլ կողմ, բայց մի յերկու որ անցած, դարձալ սիրտս ձգտում եր այն կողմը:

Պատահում եր, վոր ես երբեմն այդ հակայական կարմիր մահարձաններին երկար նայելուց հետո, նրանց վերա նույն խել պատկերներ եյի նկատում և այդ պատկերները լինում եյին՝ Զալիսեն և Տաֆուրը:

Քանի, քանի անգամ առաջարկեցի մորս, թողնել թանդուրակը և վերադառնալ մեր հին գյուղը Գուլթափան, բայց շեղավ:

— Եւս ի՞նչպես անտեր թողնեմ հորդ և Տաֆուրիս դերեզմանները կրկնում եր նա:

Խեղճ մայր, նա կամենում եր այդ գերեզմանները շրջապատել յուրայիններով...

ՎԻՇԸ ՎԵՇԻ ՅԵՇԵՎԻՑ

Վավ տղա եր ֆաթին:

Նա մեր հարեւխանի տղան եր, իմ հասակակիցը. շատ լավ գրներ եր երգում և հրաշալի սրինդ նվազում: Նա ել իրենց 15—20 վոշխարներն եր արածացնում և շատ անգամ գալիս եր Քույր ու Յեղբոր դարավանդը: Մի պարզասիրտ տղա եր. նա ինձ եր շատ սիրում, ես ել նրան: Սրնդի քանի-քանի յեղանակներ՝ նա եր ինձ սովորեցրել: Առանձնապես նա հրաշալի նվազում եր «Սիամանգո»-ի բոլոր եղանակները: Այդ եղանակը նվազելու ժամանակ նա այն աստիճանի հափչտակվում եր, վոր ունկնդրին թվում եր, թե յուր դիմացը խելական Սիամանդն և նստած:

Սկզբում նրա հարաբերությունները մեզ հետ լոկ ընկերական-եղբայրական եյին, բայց տարիին իրար ետեից անցնելով, ես մի այլ բան եյի նկատում.. Մայրը մորս հետ քույրը քրոջս, ինքը ինձ հետ վարդում եյին իրը ընտանեկան մոտ բարեկամների. վերջը հայտնվեց, վոր նա աչք ունի քրոջս, Զալիսեյի վրա: Յես նկատում եյի, վոր Զալիսեն ել անտարբեր չե զեզի նա: Յեվ երը այդ խնդիրը տարկա դար-

ձագ ընտանեկան խորհրդակցության, մայրս պնդում եր.

— Իմ աղջկա ղայանը 20 վոշխար ե, եղբայրներին մի-մի մահուդե արխալուդ, ինձ մի կարմիր ջուրբա. զրանից պակաս վոչ մի կերպ չեմ համաձայնվի. չե՞ վոր նա Տաֆուրի քույրն ե, զրանից պակաս նրան պատիվ չի բերիր.

Յես միանդամայն հակառակն եյի պնդում.

— Ի՞մ քրոջ չենք ծախում. Ֆաթին լագ տղա ե, այդ ել բավական ե, զորքան կարող ե՝ թող այնքան տա:

Յերկար սակարկությունից հետո, վերջապես համաձայնության եկանք, և Զալիսեյին նշանազրեցինք Ֆաթիի հետ. Բայց դժբախտությունը զրգած եր մեր տան ճակատին:

Մի որ լուր ե զայխ, թե հովիվները սարում կովել են և բեզի հովիվներից մեկը վիրավորել ե Ֆաթիին. Գնում ենք կովի վայրը և զանում նրան վերջին չնշում, դաշույնը կոռպը խրած: Մինչ բերում ենք տուն, նա հոգին ավանդում ե: Քննություն բացվեց, երկար ձգձգվեց այդ խնդիրը, վերջապես բեզն ու շեյխը համաձայնվելով, վճռեցին, վոր վոճրագործը չորս վոշխար տա Ֆաթիի ծնողներին և խնդիրը փակեն: Սպանության պատճառը թագնված մնաց:

Այդ դեպքից հազիվ մեկ շարաթ անցած, մեծ-խաթունը մարդ ե ուղարկում մորս մոտ, վոր Զալիսեյին ուղարկի այնտեղ կապերտ գործելու: Մայրս միամիտ, վոշինչ չի կասկածում, բայց Զալիսեն անհուն վշտի մեջ թաղված, բացարձակ հրաժարվում է:

Մի քանի որից հետո, բեզի մեծ տղան, Նազր-Բեզը դիմում ե Սլոյին, թե ինչու չենք թույլ տայիս Զալիսեյին զնալ նրանց տուն կապերտ գործելու: Սլոյն ի հարկե պատճառարանում ե այդ՝ նշանածի վերա պահելիք քառասունորյա սուգով, բայց կասկածի մեջ ե ընկնում: Նա վերջերը միայն հայտնել եր այդ կասկածը մորս: Թե մայրս և թե Սլոյն այդ բոլորը ինձանից թաքցնում եյին, զանելով, վոր ես զյուրազրգիուն, կարող եմ տհաճություններ առաջացնել:

Մի որ ել, երբ ես Քույր-Յեղրար մօտ սովորականի

ովես վոչխարս արտօծացնում էյի, չնչառապառ վաղում և ինձ
մոտ Հըլեն, Ֆաթիի քույրը և հայտնում.

— Տնաբանդ, ի՞նչ ես խաղաղ նստել, քրոջդ Զալիսեյին
փախցրին:

— Ո՞վ, ինչպես, վեր թռա յես տեղիցս սարսափահար:

— Ո՞վ, —պատասխանեց նա խորհրդավոր կերպով, — նույն
հրեշը... եղբորդ Սլոյին ել վիրավորել են. մայրդ հուսահա-
տությունից մեռնում ե, շուտով տուն հասիր...

— Բայց ով, ով ե փախցրել Զալիսեյին, ուր են տարել,
առաջ, շատ առաջ. ով ե վիրավորել Սլոյին, այժմ զնըտեղ ե...

— Մի խումբ ձիավորներ, ընդի հովիվ Ռաշոյի ղեկավա-
րությամբ, հարձակվում են Զալիսեյի վրա, հենց աղբյուրի ճա-
նապարհին. բերանը թաշկինակով կապում և ձգում ձիու վրա:
Այդ բռպեյին եղբայրդ Սլոյն, վրա և համառում, մի հասարակ
խանչալով հարձակվում նրանց վրա, Ռաշոյին զլիսից վիրավո-
րում ե, բայց մյուսները նրան մի քանի ծանր վերքեր են հառ-
ցնում, վայր ձգում, վերցնում ուշաթափված Զալիսեյին և հե-
ռանում: Բայց Զասըմ, քեզ ասեմ, Ռաշոն պատրվակ ե. նա
Զալիսեյին չեր փախցնում իր համար, այլ մի ուրիշի...

— Ո՞վ ե այդ ուրիշը, ասիր Հըլե, աղաշում եմ քեզ, ասիր,
ով ե այդ...

— Նույն հրեշը, վոր սպանել ավեց իմ եղբորս, Ֆաթիին,
նույն հրեշը, վոր այսոր սպանել և տալիս քո յեղբորը, Սլոյին,
Հասան-բեզի մեծ լակրտը, այն շունը...

— Վախ-վախ, ես այդպես ել մտածում եյի, դուքս թռավ իմ
բերանից և ես խելակորույս ուզեցի վազել դեպի աղբյուրը,
բայց Հըլեն թեկցս բռնեց.

— Ո՞ւր ես զնում, Զալիսեյին արդեն տարան, այլևս գու-
նրան աղբյուրի մոտ չես գտնիլ... զնանք դեպի տուն, հիմա
Սլոյին բերին. մայրդ արգեն մահանում ե...

Խելքը զիսիցս զնացել եր, անելիքս շրջիտեյի. երբեմն
ձեռքս տանում եյի դեպի խանչալո, բայց ում դեմ: Հըլեյի ոգ-
նությամբ վերջապես բռնեցի տան ճանապարհը: Յերբ հասա
մեր վրանը, տեսա խուռն անբոխը ցրջապատել նրան,

Ալոն երկար ձգվել եր արյունրվիկ, իսկ մայրս ուշաթափել եր վոտքերի տակ, — ծնկներս ծալվեցին, ել շըդիտեմ ինչ պատճեց...

ՄՈՐՍ ՎԵՐՉԻՆ ԱՎԱՆԴԸ

Մի շաբաթից հետո՝ մայրս վերջին չնշումն եր. յես նրա մոտից չեյի հեռանում. Մոյի թաղումից հետո, նա աչքը չեր բաց արել և վոչ մի խոսք չեր խոսացեր Յես զարձել եյի ութը տարեկան մի յերեխա, նրա անկողնից չեյի բաժանվում, յերբեմն ել երեխայի պես լաց լինում:

Մեր ամենն ինչը հոգում եր Հըլեն. նա փոխարինել եր մեր Զալիսելին. Եվ նա իսկապես մերը պիտի լիներ. չե՞ վոր մայրս վորոշել եր նրան ուղել մեր Մլոյին:

Ամենքն ել ինձ մեղաղրում եյին, վոր ես առնականություն շունիմ, թուլամորթ աղջկա նման մտել եմ ներս և արտասուր թափում, վոր՝ պետք և դուրս զամ, սար ու ձոր վունատակ տամ, զանեմ քրոջս փախցնողին, եղբորս սպանողին և վրեժիսողիր լինեմ... Միայն Հըլեն եր, վոր քրոջ նման աշխատում եր ինձ ավելի խելացի խորհուրդներ տալ, միխթարել. Բայց վերը այնքան խորն եր, վոր կարելի՞ եր միխթարվել... Ես ինքո ել շատ անգամ մեղաղրում եյի ինձ թուլամորթությանս համար, վորոշում թողնել տուն, տեղ, ամեն ինչ, բարձրանալ սարը և շը զիտեմ ինչ սոսկալի վրեժինզրությամբ, ինչ զարհուրելի ձեռնարկներով հոգուս անսանձ պահանջներին հաղուրդ տալ. Բայց մայրս, թշվառ մայրս՝ ինձ հետ եր կասեցնում. — «Են ոչախից, բազմանդամ ընտանիքից ես միակն եմ մնացել նրա մահվան անկողնի մոտ. թող նրա աչքերը վերջին անգամ փակեմ, հետո զիտեմ ես իմ անելիքս»:

Ամրող որերով չեյի քնում, եթե մի վայրկյան աշքս փակվում եր, կրկին շանթահարի պես վեր եյի թոշում աեղիցըս, և թերքում մորս երեսին՝ տեսնեմ նա տակապին չնշում ե, թէ վոչ: Կարծես շտապում եյի որ առաջ նրան տեսնել անչնչացած, վոր վերջին պարտքս կատարելով՝ աշքերը

փակեմ, ձեռքը համբուրեմ և դուրս գամ իմ անելիքս անելու...

Ամբողջ ցեղը հուզված եր. բոլորն ել զալիս, այցելում մեզ, խրառում, եյլն, մխիթարել աշխատում, բայց վոչ մեկը մի գործնական միջոց չեր առաջարկում. Մի արտակարգ հանդամանք, կարծես բոլորին ել հետ եր կասեցնում այդ գործնական քայլից. Ուրիշ այդպիսի դեպքերում, անմիջապես երիտասարդական խմբեր կը կազմվեյին, չարագործներին կը հետապնդեյին, կաշխատեյին գտնել, վրեժինդիր լինել. նույն խոկ բեղը հասուլ խմբեր կուղարկեր զանազան կողմեր, միջոցներ ձեռք կառներ, բայց այս անգամ—դատարկ ցավակցություններից, խորհուրդ ու խրաններից այն կողմը վոչ վոր չեր անցնում: Կարծես ամենքն ել հասկանում եյին, վոր զադանիքի կծիկը գանգում ե մի հզոր ձեռքում, վորի դեմ վոչ մի քայլ անել չի կարելի: Յես նկատում եյի վոր ամենքն ել առանձնապես խորհրդավոր փափում եյին և լուսւ:

Վերջին որը մեր տունն եկավ մեծ շեխը, բեզի ամենամոտ խորհրդակիցը: Սովորական մխիթարանքներից հետո, ակսեց խրաններ կարդալ զլիխիս. «Դե վորդիս, այդպիս և աշխարհիս որենքը: Ճակատագիր ե, ով կարող է մարդուս ճակատագիրը փոխել. դե հասած աղջիկ եր, մեկը պետք է փախցներ. անանշուշտ մի յերիտասարդի խելառության հետեանքն և այդ. պետք է հաշտավել ճակատագրի հետ»:

— Իսկ եզրայրս, մեծ-շեյխս, հարցը յես:

— Դա ել պատահմունք ե, դարձյալ ճակատագրի վորոշումը: Բեղն ել շատ ցավում ե. բայց դե յեղածն. եղել ե. պետք է մոածել ձեր ոջախը վերտշինելու մասին: Բեղը վճռել ե քեզ ամուսնացնել, նորից զափակներով կը լցվի տունդ, ովախը կը շենանա, ելի առաջվա ընտանիքը, ելի նույն կենցադը...

— Այս, սուրբ հայր, մի սորայիս անունը կը գնեմ Տաֆուր, մյուսինը Սլո, աղջկաս անունը Զալիսե, ելի նույն տունը, նույն ոջախը...

Եկիլը զգաց, վոր դա դառն կսկծից առաջացած հեղնանք ե, մի քիչ ել խրաններ կարդաց ու զնաց: Յես նկատեցի, վոր Հըլեն

նրա գնալու ժամանակ մի խոժոռ հայյացք ձգեց նրա յետեփց:

Այդ գիշերը, հանկարծ մայրս աշքերը բացեց և բավականին զգաստ կերպով ինձ ձայնեց.

— Եսիր գավակս, լսիր մորդ վերջին կտակը. ես մեռնում եմ, ինձանից քեզ ագանդ... զու այս արենխում տեղում չմնաս. ունեցած-չունեցածդ վերցրու, զնա հեռու յերկիր, ուր այս բեզի անուն չը լսես .. Գնա, զնա, վորդի, դլուխդ ազատիր, բոլորը ընկան, զու ել կընկնես. Գնա, հեռացիր արենխում վիշտաղների բնից... Գնա, զնա, զնան...

Յեզ թշվառ կինը ճրագի պես հանգավ:

Յես արտասուրով նրա կոպերը ծածկեցի և ձեռքը համբուրելով մրմնջացի.

— Կերթամ, զայե, կերթամ, բայց վիշտաղին ել կայրեմ, հետո կերթամ...

ՖԻՐՎԱ-ՌԶՄԱՆԸ

Յերկու յերեք որ եր մորս թաղել եյինք: Յես արգեն հանդարտիւ եյի, լրջացել, վոչ լաց եյի լինում, վոչ ել ախ ու վախ քաշում:

Մեր տան ամբողջ հոգաը յուր վրա եր վերցրել Ֆաթիի հայրը, բարեսիրս Քիրվա-Ռզմանը: Խնքը մեր վոչխարը խառնած իրենց վոչխարի հետ, տանում եր արածացնելու, կինը Խաջե-զայեն, հարազատ մոր խնամք եր տանում: Հրլեն հո կատարելապես փոխարինել եր քրոջս Զալիսեյին — Ժամանակ անժամանակ մտնել վրանո, անկողինս պատրաստել, թախանձանքներով ստիպել ինձ, վոր հաց, կերակուր ուտեմ, նույնիսկ բնածս ժամանակ գալ և ծածկել ինձ և այնու:

Քիրվա-Ռզմանը և Խաջե-զայեն ամեն երեկո զալիս եյին մի վրանո, հաց կերակուրն ել բերում այնուեղ, վոր միյասինուտենք:

— Հիմա կիսամուրագ Ֆաթիիս պիտի փոխարինես զու, Զալում, կրկնում եր Քիրվա-Ռզմանը, յես ու Խաջեն ել կլինենք քեզ հայր ու մայր. ճակատագիր եր, վորդիս, ինչ պիտի անենք, պիտի բախտի հետ հաշտվինք: Բավական ե, վորդիս, վաղը վերցրու կուլաբդ և սրինդդ, վոչխարներիդ տիրություն

արա: Միամիտ կաց, Հըլեն կը հոգա ամեն ինչ, մինչև վոր քառասունքը կը լրանա, հետո տանդ մի պյուն կը բերենք, կամուսնացնենք քեզ, նորից հորդ ոջախը կըսկսի շենանալ...

— Իսկ քույրիկս, Զալխեն, Քիրվա-Ռզման, մի հավի ձնւտ եր, թողնենք կորչի ելի՛...



—Ե՛ գորդիս, այդպես և աշխարհիս բանը, ասաց քիշքա նշմանը

— Ե՛, վորդի, իմս տղա եր, տանս պյունը, զնաց-կորավ, ինչ արի, վոր դա՝ աղջիկ ե, մեկը տարած կը լինի, վաղը մյուս որը կը հայտնվի... ել ինչ, բանը բանից անցել ե, նա այժմ արդեն կին դարձած կը լինի - վերջացավ - զնաց... Դուք մասին մտածիր, վորդիս, նորդ ոջախը վերակենդանացնելու մասին: Ես ելի Ֆաթիից հետո, փառք ասուծո, յերկու փոքրիկ տղաներ ունեմ, ե, կը մեծանան, ոջախիս ճրագը կը վառեն, բայց դու մինուճար ես, վորդիս, հայրենսական ոջախիդ միակ ճարն ու ճրագը: Յես ավելին ասեմ քեզ, վորդիս, ես ուսուզեցի ձեր անից մի աղջիկ բերեմ իմ տունս, չեղավ, բախտը դավանանեց ինձ, աչքս հանեց, հիմա ես ել պետք և բախտի աչքը հանեմ, — աղջկա փոխարեն՝ տղա կը բերեմ տունս. հենց իմանանք դու իմ տղաս, Ֆաթին ես, Հըլեն ել Զալխեն ե...

Այդ միջոցին, այդպիսի մի տրամադրության տակ, թե

ամինարկը շատ անտեղի եր, բայց վորդեկորույս մի ծնողի համար, նույնքան թշվառ մի պատանու առաջ նոր հուսատու յերի վորոնումները՝ ստիպեցին բարի ծերունուն պազամիրտ կերպով արտահայտվել:

Թեև ես վրդովվեցի, բայց երբ հայացքս ընկավ Հլեյի վրա, տեսա նա ել հուղված հայացքն ուղղեց ինձ և դուրս թռավ վրանից:

— Հա, հա, բալաս, կոկնեց աչքերը սրբելով Խաչեղայեն, դե բավական ե, վաղվանից սկսիր զործդատան ու տեղիդ տիրություն արա, մեղք ես, հերիք և տանջվես...

— Վայ մեռնողին, մայրիկ, ի հարկե նորից կը սկսենք մեր զործը, բայց գեռ սիրտս հանգիստ չե, ես չեմ կարող Քույրեղոր զարավանդը զնալ Զգիտեմ, մայրիկ, հենց տռաջուց ել մի նախազդացում ինձ ասում եր, թե այդ Քույրեղոր գերեզմանը մերն ե, մեր տանից. հիմա խսկապես, վոր այն մեկի տակ Սլոն և թաղված, մյուսի տակ Զալիսեն... Յեվ ինձպես անշնորք եղբայրը պետք ե նվազի, վոչխար արածեցնի. ԶԵ, մայրիկ, թող մի բանի որ ել այդ նեղությունը Քիրվա-Ողմանը կրի, մինչև սիրտս մի փոքր հանգստանաս:

— Քիրվա-Ողմանը քեզ մատաղ, ես երբեք ել չըսկիտի թողնեմ դու վոչխար արածես. վորտեղ իմ 15 – 20 հատս, այնտեղ ել քոնը, ես կարող եմ 300 վոչխար արածեցնել, ուր մասց 40 – 50 հատ, Քեզ համար եմ ասում, վորդիս, վոր գործի հետ ընկնես ու վիշտդ մոռանաս:

— Ծնորհակալ եմ, հայրիկ, ձեր լավությունը յերբեք չեմ մոռանալ:

ԻՆՉՊԵՍ ԼՈՒՇԵՑԻՆԵ ՄԵՐ ՎՐԵԺԸ

Արեք վաղուց մայր եր մտել: Լուսնի տռաջին քառորդը արդեն թերթիւ եր սարի մյուս կողմը և նրա ստվերն ընկել զուգանատեղի վրա: Ամբողջ որը վրանում ձգվելուց հետո, ես ուրս եյի յեկել մի փոքր ող ծծեմ: Կյանքը համարյա դապարել եր ամեն տեղ: Միայն բեզի վրանում մի աղուս ճրադ լույս եր յերեսում: Զգիտեմ ինչու, գանդաղ քայլերս ուղղեցի



«Բարիս ներ» առաջ քերտ, կրկնեցի յես ու սովորի դեղի բեզի վրանը:

դեղի այդ վրաններին մոտիկ քարքարուաները: Անարգել հասամի շարան քարաժայուերի, վորոնք դեմ առ դեմ նայում եյին բեզի վրանին: Ճրագի ազուա լույսի առաջ անսա մնծ բեզին, Հասան-Աղային, վոր վրայի դափուլը մի կողմ ձգած, նստել եր մետաքսյա անկողնի վրա, շորերն եր հանում և պատրաստվում քնելու: Ննջարանի զարագույրն ել բացել եր, վոր հյուսիսային գեփյուռը ազատ ներս մտնի:

Յես մեքենայարար դիտում եյի նրա յուրաքանչյուր շարժումը:

Հանկարծ, ինձանից վճռ շատ հեռուից մի թեթև շշուկ հառավ ականջիս. սթափվեցի, շուրջս նայեցի, — վոշինչ շըկար, միայն հեռու, փարախների մոտ գանգող շների հաջոցն եր, վորիսանգարում եր ընդհանուր լոռությունը:

Վրանի ճրագը հանգավ: Հագար ու մեկ շար ու բարի մըտքեր պաշարեցին ինձ: Անել, թէ շանել...

Մի ամբողջ ժամ բովեյական տառանումների մեջ եյի, կյանքից չեյի վախենում, շարունակ հիշում եյի նույն բեզի առածը բարձրիս ննի՝ սարա քեր» (արու գառը՝ գանակի համար ե): Բայց եթե չընաջողվի. չե՛ վոր անտեղի կերպով հայրենական ոջախիս ճրագը միանգամ ընդմիշտ պիտի հանդշի...

Զենք ել շըկար մոտա, միմիշայն մի փոքրիկ կեռ գաշույն, Տաֆուրիս դաշույնն եր, վոր մնացել եր ինձ հիշատակ և երբեք դոտկից չեյի հեռացնում ե՝, նրանով միայն կարելի՞ եր այդպիսի մի հանդուզն ձեռնարկ անել...

Մի վճռական եղբակացության դալ չեյի կարողանում:

Հանկարծ մի մտածում եկավ արագացնելու անելիքս. եթե հանկարծ թիրվա-Ազմանը դուրս դա և իմացնի հարեաններին բացակայությունս:

Բարիսե ներ՝ սարա քեր, կրկնեցի վճռականորեն և սուզցի գեղի վրանը:

Ծփոթգած եյի և ինձ այնպես թվաց, թե յերկու բանսարկուածքերը հետեւում են իմ յուրաքանչյուր բայլին... կանգ առա, շրփեցի աշքերս և երբ ստուգեցի ինքնախարեռությունս, արագ սողուկումով մոտեցա վրանին: Մի վայրկյան ել մուտքի առաջ կանգ առա, մի խորը շունչ բաշեցի և դեպի ներս...

Թե ինչ կատարվեց, չգիտեմ, միայն հիշում եմ՝ մի զարհուրելի հոնդյուն, մի հզոր ցնցում և աջ ձեռքիս ջերմ ու լողիուն հեղուկով թաթախվելը: Դուրս թռա վրանից և ուղղակի գեղի նույն բառաժայռերը:

Բայց, ով զարմանք. նույն վայրկյանին մյուս վրանից ևս լսվեց մի սրաամմիկ վայնասուն, մի մահվան ճիչ, վորին հա-



Հետո այս առաջնական գործը պահպանված է գուղքի կողմէն Կորդի կողմէն

Հորդեց ժխորային աղմուկ բոլոր վրաններում։ Պարզ լսելի եր-
ւրեղի տղային, թուրնին դարձեցին», դոչում եյին կանացի
ձայներ։

Յես ապուշ եյի կարել, քարացել — ի՞նչ թուրն, չե՞ վոր
ես մեծ-բեղին, Հառան-Ադային խողխողեցի. միթե շփոթել եմ...

Լսվեցին հրացանների անկանոն փորուռումներ և սպիտակ
ստվերներ այս ու այն կողմն եյին վաղվգում։

Մի յերկու հոգի հրացանները պայթեցնելով դեպի ինձ
եյին գաղիս։ Իմ զրությունս կրիտիքանան եր։ Մտածեցի, յե-
րեկ նկատել են ինձ... Մի բուզե առաջ ել մի ստվեր իրեն ձգեց
վերի ժայռի հետեր... Յերեկ ուզում են շրջապատել ինձ...

Փախչել դեպի ընդարձակ քարքարումները, վորոնք ձգվում
են մինչև Մասիսի ստորոտները, բայց մինչ այդ՝ պետք
եր բաց տափարակով անցնել ուր, հրացանի և տարձանակ-
ների զնդակները հետեիցս կրնամնեն, մնալ, բայց ինչպես մի
փոքրիկ զաշույնով մրցել այդ հրազենների զեմ...

«Բարխս ներ՝ սարա քեր» — հիշեցի կրկին և թագնվեցի
ժայռի հետեր։ Գնդակները սուլում եյին աջ և ձախ Յեվ ահա
ուղիղ դիմացս զույզ վոսոփներս, հրացաններն ուղղած կրծ-
քիս... Բայց և ահա «թախկ, թախկ, թախկ», լսվեց հետեիցս
և մինչ ես շփոթվեցի, վոսոխներիցս մեկը ցած ընկալվ, իսկ
մյուսի զնդակը կպավ զլիավերեմ, ժայռին, վորի գշրանքները
թափվեցին զլիխս։ Նորից հետեիցս ատրձանակի մի քանի հար-
փածներ և մյուս վոսոխս նույնպես վայնասունով ցած զլարվեց։


Յես ուղղակի քարացել եյի, երբ մի քնքույշ ձախ ննչեց
ականջիս։

— Գնանք Զասրմ, ես Ցաթիիս վրեժը լուծեցի։

— Վայ, Հըլե, զու ես, իմ փրկիշու...

— Խոսելու ժամանակ չե, թոշենք դեպի մեծ քարքա-
րուանները, Բայց զու զենք չունիս. վերցրու այն սատկածների
զենքերը, շուտ, ի՞նչ ես քարացել..».

Մենք վերցրինք մի հրացան, երկու ատրձանակ և թը-
ռանք դեպի մեծ Քան-քարքարուանները։



Ես մասնակցեցի Բաղդի բանվորական շարժումներին:

ԻՆՉՊԵՍ ԵՄ ԴԱՐՁԱՎ ԿՈՄՄՈՒՆԻՍՏ


«Դպրության գործիք, զնան այնպիսի տեսդ, վոր այլնվա բեղի առողջ շըլանս», — հիշեցի մօրս կոտակը: Յեզ Հրլեյխս հետ յերկար տառապանքներ կրելուց հետո, անցա Զիլանցիներին թշնամի Զալալցիների մեջ, հետո Պարսկաստան, իսկ այդտեղից Կովկաս: Բախտը ինձ ձգեց Բագու: Յերեք առրի իրը Խիզանցի հայ նավթահանքերում աշխատեցի, մասնակցեցի Բաղդի բանվորական շարժումներին:

Բաղության անցա Ռուսաստան: Այն խորին առելությունը, վոր ես ունեյի դեպի բեգերն ու աղաները, շեյխներն ու մոլուանները, Բաղդի բանվորական կյանքը, հեղափոխական հղոր շարժումները՝ չեյին կարող ինձ վերա չադրել... ես մասնակցեցի բանվորական բոլոր շարժումներին իմ հոգուու ձգտումներ՝ զանել մի միջամայքը, մի շրջան, ուր որեղի և աղայի ձայն չը լույս բա զտայ ավելին: Խորհրդային Ռուսաստանը,



Առ կամավոր գրվեցի Կարմիր-Բանակում:

ուր բանվորներն ու զյուդացիներն ամեն միշտ գործադրում եին վոչնչացնելու նրանց գոյությունն ու անիծյալ իշխանությունը և հիմնելու աշխատավորների իշխանությունը Յես կամավոր գրվեցի կարմիր բանակում, մասնակցեցի քաղաքացիական կոիվներին, միննույն ժամանակ սովորեցի զրել կարդալ: Կարդացի ու հասկացա մեր կովի իմաստը, պրոլետարական իշխանության եռությունը, մաս կոմմունիստական կուսակցության շարքերը, և դարձա աշխատավորների մեծ բանակի անդամը — կոմմունիստ...



Ա. Կ. ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿՐՁԵԽ
ԿՈՄԻՏԵՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅ ԵՆ ՏԵ-
ՍԵԼ ՀԱՅԵՐԵՆ

1. Կրակենք ոմբակոծենք աստծուն, ազիտ-պիհ 1 զործ.
2. Կանոնագրություն Ա. Կ. Ե. Միտրյան.
3. ԲՈՐԱՍՈՎ.—Մեր Կարմիր Բանակը.
4. ԲԼԱՇԿԵՆ.—Կարմիր ստոանի ճռւտեր.—50 կ. չերվ.
5. Միջազգային Յերիտասարդական որ.
6. ԼՈԶՈՒ.—Քյուրդ Ջամի պատմությունը.—25 կ. չերվ.


ՄԱՍՈՒԼԻ ՏԵԿ ԵՆ

1. ԲԼԱՇԿԵՆ.—Խոշողություն անդրամերները խորում ժողովրդին:
2. ԲԵՐՄՄԱՆ.—Պրոլետար յերիտասարդությունը և սե-
ռական հարցը:

ԳԱԱ ՀՀՆԱՐԱՐ Գիլ. Գրադ.



FL0063883



ԳԻՒՆ Ե 25 Ա. 2674.